

ՀԱՅՐԵՆԻ ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏՆԵՐՈՒ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ
Կազմակերպութեամբ՝
Հ.Բ.Ը.Մ.ի Մոնթրեալի Մասնաճիւղի
Նկարչական Յանձնախումբի

Ուրբաթ, 30 Նոյեմբեր 2007-ի երեկոյեան ժամը 8:30-ին կատարուեցաւ պաշտօնական բացումը հայրենի արուեստագէտներու ցուցահանդէսին, ի ներկայութեան արուեստասէր ընտրանի հասարկութեան: Պաշտօնական բացման ներկայ գտնուեցան Թեմիս Բարեխնամ Առաջնորդ՝ Գերշ. Տէր Բագրատ Եպս. Գալստանեան, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Վազգէն Քհնյ. Պոչաճեան եւ երէցկին արուեստագիտուհի Մարինէ Զուլոյեան, ինչպէս նաեւ Սէն Լորանի քաղաքապետ Ալան Տէօ Սուզա:

Մոնթրեալի Վարչութեան ատենապետ՝ Պրն. Արմէն Պչաքճեան ողջունեց ներկաները եւ շնորհակալութիւն յայտնեց Առաջնորդ Սրբազան Հօր եւ Պրն. Քաղաքապետի ներկայութեան եւ քաջալերանքին: Ան յայտնեց թէ այսօրուան ցուցահանդէսով մոնթրեալահայութեան կը ներկայացուէր հայրենի ականաւոր արուեստագէտներու գործերը, որոնցմէ շատեր արժանացած են միջազգային համբաւի:

Այդ միջազգային համբաւի արժանացած գեղանկարիչներէն է Վահրամ Դաւթեանը, որ Մովսէս Ծիրանիի գրիչով, անդրադառնալով Վահրամի ստացած գնահատանքներուն կը յայտնէ թէ անոնք «հիմնաւորուած են իր արուեստագէտի ինքնատարութեամբ, բարձր ճաշակին, ուրոյն ու գեղեցիկ համադրումներու, բացառիկ արտայայտչականութեան եւ նաեւ անհետեթ շարժումի հիմնադիրներէն ու առաջնորդներէն մէկը ըլլալու իրողութեամբ»:

Երեք օրերու ընթացքին, մոնթրեալահայութիւնը առիթը ունեցաւ նաեւ մօտէն ծանօթանալու ժամանակակից վիպապաշտութեան (modern romancism) յառաջապահներէն Սուրէն Ոսկանեանի գործերուն, ինչպէս նաեւ Դաւիթ Դաւթեանի, Տ. Մատուլեան, Վրամ Բերդեանի, Արթիւր Ք.ի, Դաւիթ Պապոյեանի, Սանասար Արոյեանի գեղեցիկ գործերուն, ինչպէս նաեւ քանդակագործ Արամովի փայտէ կնոջական կերպարներուն:

Այս ցուցահանդէսի կազմակերպչական աշխատանքներուն իրենց ներդրումը ընծայեցին մոնթրեալահայ արուեստագէտներ՝ ՊՊ. Պերճ Զաքըճեան եւ Եղիա Պէքմէզճեան:

Ընդհանրութեան յատուկ խօսք կազմակերպիչ մարմնի անդամներուն՝ սոյն ցուցահանդէսի պատասխանատու՝ Պրն. Մկօ Գանունճեանին, ինչպէս նաեւ վարչութեան անդամներուն՝ տիկիններ Արտա Գուլումճեանին, Սոնիա Գարակէօզեանին, Սեզա Աճէմեանին, Լեւա Պէօճէքեանին, Սիրան Ծիթիլեանին, Սիլվա Մանկասարեանին, պարոնաք՝ Ռաֆֆի Ծիթիլեանին եւ Արա Նահապետեանին:

Թղթակից